

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային  
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
կառավարման խորհրդի  
«07» « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային  
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
տնօրենի « 29 » « 12 » 2016 թ.  
թիվ 494 հրամանով



**„ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՔՈԼԵՋ,,  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

## Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջում (ԳՏՊԲ) որակի ապահովման ռազմավարությունը ձևակերպված է քոլեջի ՌԾ-ի հիմնախնդիր 2-ում, որոնք ներկայումս իրականացվում են: Դրանք նախատեսում են

- մշակել և ներդնել որակի կառավարման արդյունավետ համակարգ, որը կապահովի կրթական գործունեության որակի անընդհատ բարելավումը
- Կրթական ծրագրերի ՈԱ մեխանիզմների և ընթացակարգերի ընդլայնում
- Ուսանողների գնահատման արժանահավատ համակարգի օգտագործում
- մշակել, իրականացնել և մշտապես կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ,
- անընդհատ բարձրացնել կրթական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը,
- մեծացնել Գեղարքունիքի Տարածաշրջանային պետական քոլեջի նորարարական գործունեության ծավալն ու ասպարեզները՝ որպես հիմք լրացուցիչ ռեսուրսների ներգրավման, անձնակազմի որակավորման և պրակտիկ հմտությունների բարձրացման, բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման և կրթական գործընթացի բարելավման նպատակով,
- Դասախոսական կազմի որակի ապահովման գործընթացների կատարելագործում
- Ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների որակի ապահովում
- Նախատեսված է ապահովել որակի գործընթացների թափանցկությունը և հրապայնակությունը
- Նախատեսված է ուսանողների, ներքին ու արտաքին շահակիցների մասնակցությունը ՈԱ գործընթացներին

Ներկայումս քոլեջում գործի է դրվում ՈԱ մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են որակի շարունակական բարելավմանը՝

- Կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկում և պարբերաբար վերանայում
- Քոլեջի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումները
- Արտաքին շահակիցների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպում քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվում են մասնագիտությունների

ճշգրտման հարցերը և շուկայի պահանջարկը

- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների մասնակցությունը ու նրանց շրջանում անցկացվող հարցումները, որոնց արդյունքները կիրառվում են կրթական ծրագրերի վերանայման գործընթացում
- Քոլեջում գործող գնահատման համակարգերի վերաբերյալ դասախոսների և ուսանողների շրջանում անցկացվող հարցումները
- Դասախոսներ, որոնց արդյունքները միտված են ուսումնառության գործընթացի որակի բարելավմանը
- Դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիր, որի նպատակն է դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների բարելավմանը: